

Ա. ԶԱՆԵԱՆ

# ԿԵԱՆՔԻ ԳՄՐՈՒՆՔԻՆ

ВЕСНА ЖИЗНИ

А. ДЖАНИЯНЪ

ԿԵՐԱՍՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ  
Գրական կենտրոն  
Տ Ի Գ Բ Ա Ն Ե Ա Զ Ա Ղ Ն Ն Ն Ն Ն  
18 թվաթ. 1918 թ. Երևան

ԲԱՇԽԻ  
Տպարան «ՏՐԱԿՆԻ»

БАКУ  
Типогр. «ТРУДЪ»  
1908 г.

891.99

Ը-29

891.99

Զ-29

uf


Ա. ԶԱՆԵԱՆ

# ԿԵԱՆՔԻ ԳԱՐՈՒՆՔԻՆ

1001  
3558

ВЕСНА ЖИЗНИ

А. ДЖАНИЯНЪ



ԲԱԳՈՒ  
Տպարան «ՏՐՈՒԳ»  
1908 թ.

ԲԱԿՄ  
Типогр. «ТРУДЪ»  
1908 г.

## Պ Օ Է Ջ Ի Ա

Քինոս սուերը սեփն եր սալիս կեանքի ավերում,  
ու կուռ շղթայով բռնակալ ոգուն հարւածում այսպէս:

Ահարկու դեմք նման եր միայն այլանդակ ցաւին,  
որին դժոխկը նայելուց յետոյ կըխորշեր անգամ.

Խելոք նակասից ծորում եր հիւքը այն մեղկ դառ-  
նութեան, որ մեր բերանով քրտնէ ե կոչւում.

Ու մեծ սարածում ոսկրոս այսերը շիկնել եր այդ-  
պէս:

Նայում եր դուրսը, բաց հորիզոնի կապոյտ լներին,  
որոնք անհունի փեշերը մեծ սարւում են աչքով.

Խորասուզւած եր, զանգակը ձեռին մերք մեծ-  
ծում եր:

— Կրկպշեմ ցաւից, բայց չեմ դիմանայ ահարկու  
բեռին, կը գնամ այսպէս, մինչեւ գիշերը հետախաղ  
մտքիս պատնէշ կը կանգնի, ու քուն կը մտնեմ.

Ասա՛ց, ու գնաց:

Բայց նա չըզիտեր թէ ի՞նչ է խորհում իրանից վե-  
րեւ կեանքի Աստուածը, մահու ժպիտը իւր պաղ շրթե-  
րին, չարի՞ք է գործում, թե՛ մի նոր բարիք.

„Գեղարեւոյսի“ II գրում սպած է „Մարդը“ վերնագրով:

Անորո՞՞ց պիտ մնայ...

Ու սեւ սաքի նման գանգուր մազերը իջել էին մերկ ուսերի վերան, եւ խառնուել ցրիւ. կուրծքը նիւանդ էր, իսկ ջերմ կրակից այրւած շրթերը սի՛րս էր բռնեցնում, նա պապակում էր.

Որոնոյ միտքը զարթել էր այնտեղ, մարդը չէր յոգնում:

Ու այդ դիրքի մեջ՝ վե՛ն էր, գեղեցիկ, խոնխոս ու սիրուն.

—Ոգի՛ ասաց նա, այսօր յոգնած եմ քո՛ւղ ինձ մի բոպէ

—Գու մա՛րդ ես ծնւած—լավեց վերելից:

—Գիտե՛մ, ասաց նա—հին հին օրերի սեւ նզովք ունի իմ պատմութիւնը, անցեալիս համար ինձ մի՛ նախասիլ, գիտեմ որ որդ եմ, կեխսոս սիդմերից մինչ այստեղ ձգւած, բայց այդ էլ բաւ է, քո՛ւղ ինձ, ու անցիր:

—Ո՛չ, ասաց նրան, մինչեւ որ գասես եւ նախորդներից, ու եւ կոչումին վայել դիրք բռնես, ա՛ն եւ ստեղծիր.

Մանկացաւ տղան, վրձինը բռնած քաքախեց սրբում, ու գործի ելաւ.

Գործե՛ց հիաստանչ, գործե՛ց խնդալի:

Բնութիւնը զգաց, որ մի ոյժ տղամից ձգւում է դեպ ինքն անհուն կարօտով, ու յե՛ս-յե՛ս փառւեց.

Խորունկ քախիծով պատեց աղբիւրը գերագոյն մտքի, ու վե՛տի տապով յաղթեց հսկային:

—Լսի՛ր, ասաց նա. խոհուն աչերդ շատ է նայում ինձ, խելօ՛՞ք ես գուցէ. բայց ասա խնդրեմ, կրհասանե՞ս

արդեօք դու իմ բարձրութեան գեղեցկութեան հետ, եւ այդ ե՞րբ, ի՞նչպէս...

—Կրհասանե՛մ ասաց:

Վնուական ձայնը դող գցեց նրա երակներին մեջ, ու նա սպրդեց. բռում էր ոգին զղջացած լինէր իւր հին արարքը, սխալ էր գործել, ուզեց դրսեւել.

—Բժախնդիր եմ, կրկնեց նա նորից, մանրակիտ եղիր, եւ կա՛տարեւոյնութեան երբ որ կհասնես, ինձ իմաց կը տա:

Ասա՛ց, ու զնաց.

Ու արքեց տղան, սիրոյ կսկիծը դեմ առաւ նրա փնտս կոկորդին, ու վիճար գործեց.

Հսկայ ժայռերը դեմ եկան այդպէս նրա յանդիման, ու անշունչ ընկան.

Մրած տապարը հարթեց խոչ ու խուր, ու առաջ անցաւ:

—Մա՛հն եմ տանում ես—խօսեց նա մի օր—մեծ անձամբօրով նակասրս յղի՛ նայում եմ բարձրին ու վիճս լալիս.

—Ասւած լինելու տե՛նչ կայ սրտումքս, եւ դորս համար անհուն տանջանքի բեռը շարակած՝ կեա՛նք եմ հարբում ես.)

—Ու այդ ամբողջի տապարը մտքիս, օ՛ր չի տալիս ինձ, դեպ մա՛րդն եմ ձգտում...

—Կա՛ց, ասաց ոգին. այդ մտքերիդ հետ եւ անփոյր գործը ինձ է պատկանում, որ խեղճութեան հետ վաղուց բողբի եմ իմ նախօրդները, դու նախ գժագրիր եւ անելիքը.

—Ես կաղապարը իմ մտնում ունիմ...

Եւ խուլ հառաչը բռնեց սար ու ձոր, դեպի կասարեղութեան ձեւն անըմբռնելի, ազգակից հոգին կամաց սողում էր, բայց յանկարծ լսեց.

— Ու այդ բոլորը հեզ ինչի՞ համար, այդտեղ քո մահն է...

Հետախոյզ միտքը այդպէ՛ս խեղսեց նա:

## ԿԵԱՆՔԻ ԳՍՐՈՒՆՔԻՆ

### I

Ու սեւ մշուշի արանքից հեռուում,  
Տեսայ իմ կեանքի անցեալը մթնում.  
Տեսայ քե ինչպէս քախիծ էր պատել  
Սիրս էր որոնում չէր կարում գտնել:  
Ամենքն այդ նամփում յոգնած էւ հիվանդ  
Դայուկ ու յոհկ ինչպէս հիւժուղ մարդ  
Ճիգ են գործ դնում մօտ գալ այն շեմքին  
Ուր որ յանձնւած է օրհեք մահին,  
Ու հանգիստ հոգով փարւել մի առ մի  
Թէ ի՛նչ է կեանքը, քէ ի՛նչ է յիմի  
Ընչի՞ են տեսնեմ եկել էս աշխարհ  
Կո՛խ տեսնելու, դաւերի համար  
Թէ ազատութեան այն շողփը մթին,  
Ուր դեռ չէ փայլել ճանաչը յետին  
Եւ գիրկն աշուի էն սեւ գիշերւան,  
Երբ որ սիրում էր քախիծն իմ վերան  
Ուզեցայ յանկարծ երկիւնքը նայել  
Իմ հիւանդ հոգով աստիերը գրկել:

Ուր սեպ լեռները բոցն արեւմտին  
Մեռնող արեւի հանանչը յետին,  
Եկան իմ նիհար ականջին քաղել  
Թե կարն է օրդդ, թե շաս է էք էլ  
Ու ես միայնակ անզգայ օդում,  
Տեսայ թե ինչպէս անձրեւն է կարում:

## II

Եւ ես միայնակ մտածում էի  
Թե կարն է օրդ, թե շաս է էլ  
Ինչպէս ամառւայ տարագիր բռնուն,  
Կեանքս էլ ինձ համար որպէս մի հնչուն  
Դեգերում էինք գիրկը սեւ մահուան  
Ու չէինք գիտում թե ո՞րտեղ էր այն.  
Մեծ բացւած կիրճի ծմակի՞ վերեւ,  
Թե՞ սիւսակ հագած սարերի ետեւ  
Որպէս փոքորիկ գոհար ձիւներում  
Ցրտից արծրի թելերն է սառչում  
Ու մոռանալով բարձրաբերձ հսկան  
Որ հին օրերի ապաստանն էր այն,  
Խեղճում է լռիկ իւր տենչը յետին  
Եւ իջնում դեպի անդունդն անազին.  
Այդպէս էլ քամուց հայածւած ու հեզ  
Իջնում էր հոգիս ուղիղ դեպի ձեզ,  
Ուր գլուխ—գլխի մարդիկ են ապրում  
Բայց չը գիտէի թե ի՞նչ են շինում  
Ամուր ձեռք ու ոտ կապկապած իրար

Բարի՞ք են գործում մեկ-մեկու համար,  
Թե՞ նինու դառած նամ տանիքներում  
Որտեղ որ կանաչ մողեսն է սողում  
Ձգում են ընկնում ծոյլ մեջքի վրայ  
Ու ձեր աշխարհը այդ վի՞հն է յիմա  
Որ ինչպէս մանուկ իւր ձեռքը պարզած  
Ապրուտ է հայցում մուրացիկ դառած:

## III

Ես այդ չը գիտեմ, եւ ինչ լսել եմ  
Այդ իմ երգերի ոգին է վսեմ.  
Որ զարնան զուգսով մով այլ հագած  
Նրբ որ շատերի հոգին է մթնած  
Թռչում են կանգնում մութ անայի վերեւ  
Ինչպէս նետասլաց արծիւր թեթեւ  
Կամ կտրի վրայ կգած այն ծառին  
Նրբ որ ամառւայ գիշերն է մթին  
Թռչում են զսնում օրրանս վաղւայ  
Անհոգ մոռակներն մեր սրճի վրայ.  
Ու այդ օրերին երբ ծիծեռնակի՞  
Ձայնը չէր կարում տոյել իմ մտքի  
Վառ երազները. ես քնից էլայ  
Եւ երկու աչքով գիշերը տեսայ:  
Հնչում էր արժում տերեւ ու ծառեր  
Լուսինը աղօս սահում դեպի վեր  
Ու ես դեռ մանուկ եմ կեանքի շեմին,  
Ականջ դրեցի երգի խօսքերին.

Ուր մեղմ շունկով բնութիւնն ազան  
 Ընկած վիրաւոր իմ կրծքի վերայ  
 Երգում եր անհետ առանց յուզմունքի,  
 Թե կեանքը լաւ է, միայն թէ մարդի  
 Հոգին համակուեր մեծ վշտով միայն  
 Եւ ես իմացայ թէ ընչիցն եր այն  
 Որ երբ մի անգամ այն շալակս առայ,  
 Ցաւի հետքերը իմ դեմքին տեսայ:

## IV

Ու վեր եր կենում իմ միտքը թեթեւ  
 Մեկ-մեկ էլ ընկնում աշխարհիքի ետեւ  
 Ինչպէս հալածւած իժ օձը ազան  
 Թե ո՞ւր է գնում, թէ ի՞նչ է հապա  
 Ահաւոր վիշտը իւր մեջքը առած  
 Ո՞ւր է մեզ սանում կամ ի՞նչ է դրած  
 Այն սեւ մտնումը. որ այնպէս հպարտ՝  
 Մեզ իւր յետեւից ֆառում է ազատ:  
 Կամ ի՞նչ է նրա խորհուրդը վսեմ  
 Այն հակասական բոյլ շողքը նսեմ,  
 Որ երբ քփից քուփ ցատկոտում էին  
 Խեղճ հոգիները աչքը սարերին  
 Նա մօտ եր բերում իւր սեւ ափսոսանք:  
 Ու խփում այդպէս ջարտոտում անւախ  
 Մտքի Աստուծոյ հպարտ ու խիզախ,  
 Եւ իւր անզոյց շարժելով ժամին  
 Երբ ձգտում էին մարդիք կասարժն

Գեղեցիկն ընդմիտ աչքերին ձգած  
 Ազատ սարածքը առջեւը բռնած  
 Նա դողդողալով մօտենում եր խորք  
 Բռնում բոյլերի շլինք ու կոկորդ  
 Ու դեմքը կրկին մանի սաւանով  
 Բարբառոս գործի հետքը ծագկելով  
 Իջնում եր նորից իր որջը մքին  
 Դեպ կասարելութեան շիրիմն անագին  
 Որտեղ այլեւս չեն լավում ձայներ  
 Ուր ողջ աշխարհը այդպէս է մեռել...

## V

Կամ թէ գուցէ հենց այդտեղ է դրած  
 Մեր կեանքի միտքը ձեռները կտած  
 Որ երբ մի անգամ մեր միջում յոգնի,  
 Գնայ մեռնելով աշխարհը բողնի  
 Ինչպէս սեւ օձը իւր խորխոր անգին  
 Որ երբ տեսնում է նեղ է իւր հագին  
 Թողնում է իսկոյն այդ հիւնը հպարտ  
 Գնում խայտալով իր մեջքը ազատ  
 Եւ կեանքի միտքը ինձ պարզ է քուտ  
 Երբ ողջը այդպէս դեպ նորն է ձգտում:  
 Բայց միտք էլ հոգիս այդպէս չէ եղել  
 Թաւմ հեռուներին նա խեղ է նայել  
 Նայած թէ ի՞նչպէս գայտնի զգացում  
 Թողել է նրան աշխարհը սիրուն  
 Համակերպումը քրքել է ինձ վատ

Օրէնքների հետ չեմ եղել ես հաւտ  
 Եւ երբ կապանքը ելել է ինձ դեմ՝  
 Այն խորակելու ես ոյժ եմ գտել.  
 Ազատն ու բարձր պոս մըռուռում  
 Ուր որ կախել եմ պառնգր օդում  
 Սեպ-սեպ ժայռերը յոնքերը կիսած  
 Լայն փեշերի սակ հաւքերը խմբած  
 Ու նրանց գլխին ամպերը մթին  
 Ներքեւ արեւի բոյլ շողքը յետին  
 Տառապում էին իմ միտքը վաղւայ  
 Անցաւ գլուխս ու սիրես հերւայ  
 թէ սառը օդում կասարը ցցել  
 Պառաւ տասիս պէս ո՞նց է պրպրգել  
 Էս մեծ վիթխարին անարկու ու սեւ.  
 Կամ գետնի համար ո՞րքան է թեթեւ  
 Որ հպարտ կերպով իր մեջքը առած՝  
 Յարի հեզնութեամբ իւր դուրսն է ցցած:  
 Ու լուսնի լուսով իրիկունքները  
 Ծրվրվում էին ծիծեռնակները,  
 Յատկում խաղալով իջնում դեպի ցած  
 Որտեղ պետր ջաղացն է կանգնած  
 Եւ ֆսլում անվերջ նդփուն ջրերին  
 Իսկ նրանցից վեր ֆարափի բերնին  
 Մութ անհայտութան անորոշ դողում  
 Որտեղ ֆաջերի շարանն է պահում  
 Երեւում են մերք նրանց ձագերը  
 Իմ հոգում նսած այդ սեւ փոքերը,  
 Գրգրգում էին յանախ իրարու  
 Ու ես այդ խաղին իմ կեանքն եմ տալու:

Բայց ես միտս հաշտել չէի կարենում  
 Թէ կարելի էր մեռնել աշխարհում.  
 Թաղւել, մտապել, ու վերջը, յետոյ  
 Այս անարգ կեանքը թեւ անհանոյ —  
 Յանձնել մի ուրիշին. ու ինքն փռուման,  
 Գնալ քողնելով աշխարհիք ունայն.  
 Եւ սկարացած այդ վագրը անմիտ  
 Որ ժամանակի օրէնքն է լքումիտ  
 Չէի՞ն հարցրնի ում էր հարկաւոր  
 Որ ինչպէս ֆամի իւր նամփան սովոր,  
 Եկաւ աղմուկով ու խառնեց իրար  
 Հին տերեւները բռչելու համար:  
 Կամ աննպատակ մի խաղ էր գուցէ  
 Կեանքի այս վագրը — գնդակը բողբ  
 Որ երբ կանգնում էր ոտերը յոգնած՝  
 Սկսում էր վագրել. այդպէ՛ս ենք եղած —  
 Եւ մենք, մանուկներս կոյր ու թխլիկ  
 Բայց ո՞վ է տեսել մեր սիրտը փափլիկ  
 Որ երբ հին ցաւին անգգայ ու խորը  
 Յատկոտում էինք անվերջ ինչպէս հորը,  
 Դուք լալիս էիք յուզում ու երկոտ:  
 Ու այդ արցունքը ցաւոտ ու թեթեւ  
 Այսօր է քափում իմ կեանքի վերեւ  
 Ուր սեւ գիշերին սիրտս ակամայ  
 Դուրս էր ասեւ հրնոցի վրայ  
 Ու այրում այդպէս տանում միասին



Յորդ անձրեւելով իմ օրը մթին  
 Եւ վերեւ բռնած իմ դեմքի վրայ  
 Ձեզ հանրածանօք իմ վիճսս է անա:

## VII

Ու սառապանքի այդ վեհ սնակում  
 Տեսնում եմ անա ձեր դեմքը մթնում  
 Զարդած, կորացած, ցաւին ակամայ  
 Ընկած կիսամեռ մայր երկրի վերայ.  
 Ձե՛մ գիտում յանախ քե ընչիցն է այն  
 Խորունկ քախիծով բացւած իմ վերան  
 Ձեր ջուխտ աչքերը հայացքը յամառ  
 Կարծես հարցնում են քե ընչի՞ համար  
 Ծով կարիքի հետ աշխարհքը ետպես  
 Գալիս են կոխում ու գնում մեզպես  
 Ինչպէս մութ ամպը ձիւնոտ սարերի  
 Կամ չող հաւքը հեռուն հարաւի  
 Որ չի էլ հարցնում քե ինչի համար  
 Գալիս է գնում ու հետքը յարմար  
 Թողնում մի ուրիշին, իսկ ինքը ազատ  
 Գնում մեռնելու աշխարհքը բոլոր...  
 Բայց այդ խաղաղիք երանք եղպես  
 Ձի՛ էլ հասկանում բարձրերը մեզպես  
 Թեքեւորքիւնից հայրս էլ եր ասում  
 Որ ամեն մի շիւղ դեպ վերն է ձգում  
 Ինչպէս կիսաչոր այն ջուխտակ բարդին  
 Որ երբ մեր եզր կրծեց իւր մարքին

Այն օրից հագաւ իւր սեւը մթին.  
 Ու այդ իրիկուն հօրս տուն սարան  
 Գեղամիջումը պարսքի սակ դրան  
 Որ եք գարնան բարդին չը բացւի  
 Մի օր այն բաղչում ձեր աշխարհ:  
 Աղբ շալկի մեջով սանի սնկան մօտ  
 Շուրջը փափկացնի, աղաչի վճոտ  
 Ու կեղեւի տեղ տաք քրինկ կապի  
 Զուլով փալատով մեջքը պնդացնի.  
 Էղպես են աւան գիւղի ծառերը  
 Բաղչաների մեջ կանգնած խեղները  
 Ենթարկում են միտք բմբոս յարձակման  
 Ու չես էլ գիտում քե ի՞նչ բան եր այն  
 Որ եկաւ հապես կրծեց ու գնաց  
 Ծառի կեղեւներն, դիտմա՞մբ եր սարեւած.  
 Թե՞ ջրի համպին ետերը մոլի  
 Խինջ էին արել ու սեւ փախի,  
 Տղի առաջից ծուել բաղերը  
 Ու կրծել այդպէս մասաղ տունկերը:  
 Եւ երեկոներն անհաւտ ու յամառ  
 Ըսկում եր կանչը, ուշուցքը յարմար  
 Մինչեւ որ մեկից կաշառք չեր առնում  
 Գիրի ձայնը էլ չեր դադարում.  
 Կամ գեղամիջում են մթին գոմի  
 Յասակի վրայ չեր լաւում մեկի՝  
 Խուլ սնեցնեցք, ես աչս իսկոյն  
 Ձեի հեռացնում եղ դեմքից սիրուն:

## VIII

Տանջւողն եր եղսեղ յասակում քնկած  
 Խուլ գրոգրոցըր տուն ու սեղ բռնած  
 Ու հայնոյում եր խօսում դառնապէս  
 Դուրսը շները ոռնում են եղպէս  
 Քե քնչի՞ եք ինձ ես գոմում կապել,  
 Իմ ցանկութիւնից ու խօսքից գրկել  
 Ինչպէս մի անմիտ ու անկամբ հայւան  
 Որ երբ տեսնում է կտուրն իր վերան  
 Սկսում է ոտով գետնը փորել.  
 Ինչպէս մեծ պասին բողած ետերը  
 Որ երբ կրծում են մասաղ տունկերը  
 Չե՛ն էլ հարցրնում քե ով է սնկել  
 Մի բանի համար եսպէս մեծացրել:  
 Ու քում եր ինձ քե մեք էլ եղպէս  
 Մի-մի սնկի ենք են ջուխս բարդի պէս  
 ցցած ես անտէր բաղչում ակամայ,  
 Եկել ենք լալիս մեր միտքը վաղւայ  
 Որ տղի առջից պատահմամբ մի ետ  
 Գալիս է կրծում, ու յետոյ մի քեժ—  
 Արցունքի ծոր ենք մեր մտից բողնում  
 Եւ յետոյ դարձեալ կանգնած աղօթում  
 Որ մի բոյլ քամի գայ մեզ օրօրի  
 Մեռնող գլուխներս տարածում շարժի  
 Ինչպէս տաշտը խոռվայոյց օրւայ  
 Կանգնած ալեծովի բունդ ծովի վերայ  
 Որ չի՛ էլ գիտում քե ինչպէս անի՛

էն անտէր կեանքը ջրում չը բաղի.  
 Այլ գնայ հեռու գլուխը բռնած  
 Մի ազատ օդում ոտերը մեկնած  
 Նստի, որոնայ, ու այդ բարմ հեռվում  
 Ուր կեանք է մահու երգը չէ լուռմ:

## IX

Կամ մեր պարտեզը պահապան ունի՞  
 Որ իրիկուններն իր գողը գտնի,  
 Տանի գեղամեջ օձիքից բռնած  
 Ասի քե ի՞նչ ես կացիքդ առած  
 Ընկել անլեզու ես խեղճ բաղչեք  
 Արմատից կտրում մասաղ տունկերը  
 Տանում բաղելով մքնում ակամայ  
 Որ էլ չը կանգնի ոտերի վրայ,  
 Նայի աջ ու ձախ, ու ձեռքը կտած  
 Մի գործի կաշի եւ յետոյ յոգնած,  
 Ընկնի վայունով են բիրտ հարածից  
 Որպէս ջոկում է արմատք բնից  
 Եւ յետոյ դարձեալ առանց ամօրի,  
 Ցցել գլուխը կպնել մի գործի  
 Նոր կեանքի համար մի մեծ բան շինել  
 Այդպէս դարերի տարիքն է անցել.  
 Միեւեւ որ քնի երազը կը գայ  
 Ամենքն էս կեանքում ինչ որ կրմնայ՝  
 Կը գան ու կանցնեն. եւ վերջը, յետոյ  
 Երազած ճիպը որքան եւ հանոյ,

Ել կը դադարի նպասակ լինել  
Յեխոս նիճուներ դեպ իրան քաշել  
Ուր ցաւ ու հոգսի մարդը ակամայ  
Կըսկսի մտածել լոկ շահի վրայ  
Թէ ինչպէս յանկարծ են կարող մթնում  
Որտեղ որ յանախ կիրեն էլ է քաղնում  
Սկսում են գործել բոլոր կոյրերը  
Հանդիմանում սարւած այդ մեծ փոքրերը  
Հարւածում են միշտ նեղում իրարու,  
Եւ ես այդ կեանքին զգանքս եմ տալու:

## X

Հեղեղասն էր խուլ առջեւս ընկած,  
Ներքեւ քարափում ոչխարն էր նստած  
Եւ մի անառայ լուսնեակ իրիկուն  
Երբ որ մեր արտից խուրձ էի բերում  
Տեսայ անտառում գայլերն անսահման  
Ներքեւ լեռների շաւն անասան.  
Իսկ գլխիս վրայ կաղնի տերեւում  
Իւր սեւ բնի մեջ քրքուրն էր գործում:  
Եւ ետն անբաժան առաջս արած  
Մի երկար ձող էլ ուստումս դրած  
Գալիս էի քառ դեպի կայերը  
Վերեւ ոսկեոյ բողի արտերը.  
Իսկ դեպի ներքեւ վսակը փռւած  
Կանայ խոտերին իր կուրծքը տրած,  
Գլուխում էր ցած դեպի ձորերը

Մերք փաղափեւում շունն քիները  
Իսկ ջրից կոկւած ժայռերը յետին  
Ու մեր բերանով սարփեր կոչւեցին  
Մնում էր ուղիղ նամփի վերեւը  
Որից քափւելով խօսուն ջրերը  
Փրսփրսում էին այնքան գաղտնիներ  
Ու կարծում էի թէ մահն է եկել  
Իր գործ քեւերով չոք արել նստել  
Գլուխն ու ոտը սեւ տողով պատել  
Ուզում է նաննիս փախցրնի տանի  
Ու իսկոյն եւ էր խեղճ մօրս յիշեցի:  
Չըզիտեմ ինչու եղպես դեփքերում  
Մարդ ակամայից մի շունչ է փնտրում  
Ծառ, մացառ, ծաղիկ քեկուզ—բուսի լինի  
Միայն թէ նրան տեսնի ու կանգնի.  
Էղպես ետն եղել մենք մինչեւ կուր  
Եւ չեմք էլ գտել մի ձեռք գորաւոր  
Ու ընկած տեղից մեզ բռնի պահի  
Ասի թէ եղպես միշտ կանգնած ապրի:  
Ու կեանքը այդ հին մեր շալակն առած  
Ընկել ետն եղպես նահիւնները ցած  
Քծնում ու նիւրում դաւեր իրարու  
Թողնում մեր ետքից մահ, աւեր, ինչո՞ւ,  
Որպէս տանիքում կանայ մողեսը  
Կամ գոմերի մօտ փոքրիկ աղւետը  
Ուզում ենք մեկից մի քանի կեանք խլել  
Եւ այդ սեւ գնով մի օր լաւ ապրել:

## XI

Ու խորհում էի քե՞նք ե՞զնում  
 էս վսակն հայտն ավերք բողնում,  
 Իջնում շտապով դեպի ձորերը  
 Յամառ լիզելով սակի փառերը  
 Թռչում խնդալով ինքն իրան խօսում  
 Մի՞թե աշխարհում մի ձայնն է մնում.  
 Եւ եթե եղ բանն միտս նիտս է հապա  
 էլ ինչո՞ւ եմք մեմք սանջւել մինչ յիմայ,  
 Ճշանք, որոտանք ու վերջը հայտն  
 Գնանք քափւելու ժայռերից պէս-պէս.  
 Ինչպէս զարուհւայ խօսուն ջրերը  
 Որ երբ բացւում են գետի ակները  
 Սկսում է ուռած ավերք լիզել,  
 Ու ջարդասելով ժայռերից ընկնել.  
 Էդ խաղն է մեմակ որ կեանք է կոչւում  
 Շրտուն հանելով ավերք լիզում,  
 Գնում քուփ մացառ անում սակովը  
 Մի վայրկեան միայն լինում յաղբողը.  
 Եւ յետոյ դարձեալ հաւեն ետ նսած  
 Էն իւր առաջւայ նեղ հունը մսած,  
 Սկսում է դարձեալ փարել խոտերը  
 Ալիքի առաջ ընկած փառերը  
 Նրա գգւանից մնում են միտս բաց՝  
 Որին պատում է մամուռը կանաչ:  
 Ու քում էր որ եղպէս իմ կեանքն էլ  
 Ուրբան էլ այնժամ եւ մանուկ լինեք

## XII

Լիքը դարդերի մի խուրձ էր հապա  
 Որին գգւում էր ալիքը վաղւայ,  
 Որ մի ժամանակ ո՞վ գիտէ, գուցէ՝  
 Փաղափտելուց յետ իր հարւածն ուղղէ.  
 Ինչպէս փափկանիսս մեծասունները  
 Որ երբ տեսնում են սոված շները  
 Սկսում են սուփրից կտոր հաց ձգել  
 Կեանքն էլ մեզ վերից եղպէս է բաշխել:

Եւ իմ տեսնելը հենց այդ մի խօսքն էր  
 Թէ ինչո՞ւ իմ սանձն ուրիշն է բռնել.  
 Ազատ, ապահով ցաւին ակամայ  
 Չէ դուրել կեանքս սարերի վերայ,  
 Ինչպէս սարածում սահող արծիւր,  
 Կամ իր խնամքին բողած անիւր,  
 Որ չի՞ էլ գիտում քե՞ ինչպէս անի  
 Խենք բռնիչները մի վայրկեան սանձի.  
 Նայի վեհօրէն ազատ դատերին  
 Մըտուում քաղած լեռան լանջերին,  
 Տեսնի՞ ու այրւած իր տրին հով սայ  
 Մեկ-մեկ էլ խորհի սեւ մահի վրայ  
 Թէ ի՞նչ է քե՞ կեանքն որ հայտն հպարտ  
 Գալիս եմք քաղում մեր գլուխն ազատ--  
 Էդ մեծ վնի մեջ. ու վերջը, յետոյ՝  
 Մի սեւ բաց բողնում դատարկ, անհանդ  
 Եւ դարձեալ գնում հին տղան բռնած

Այդպէս մեր կեանքի օրերն է համրած.  
 Թէ հեռու ընկած օտար վայրերում  
 Որտեղ արեւի հաճանչն է փայլում  
 Նստում են միշտ անմեռ կեանքերը  
 Մեր գլխում նստած այդ խենթ մտերը,  
 Հակասում էին յանախ իրարու  
 Եւ ես դրանցից շահ էի հետու:  
 Պատմում էին որ օտար տեղերում,  
 Որտեղ գիշերով արեւն է բազմում  
 Եւ լուսինն աղօս իր ֆոյր ձգած  
 Անհուն կարոտով աստղերը գրկած.  
 Թովիչ ու սիրուն երգում գիշերը,  
 Այդտեղ ծաղկում է սիրոյ եղբւր  
 Որին ակրնդէս մայրս հայեացքով  
 Իրիկնադէմին տանում եր իր ֆով,  
 Չոքեցնում զօրով ձեռքերս խաչում  
 Ու մտքի միջում արտաճեց աղօթում:  
 Այդ այն ժամանակ երբ մեկն ու մեկիս,  
 Գործից դառնալը ուշանում եր միշտ.  
 Լեղին պատահած ընկնում եր դես դէն  
 Եւ աղօթք անում անեծքն էլ վրէն  
 Թէ ի՞նչպէս եղաւ որ սարից չեկաւ,  
 Սեւ մութ գիշերով կտան ուշացաւ  
 Արդեօք առաջից եզնե՞րք փախցրեց,  
 Թե՞ պարտքի ձեռից ֆարսիից կախուց  
 Կամ սովից դրդած գայլերը ագան  
 Նստել են արդէն իր լեռի վրայ  
 Որ ես ածղահան կտան ուշացաւ  
 Տուն տեղն էլ յետը մտքիցը գցաւ:  
 Ու նեղանում եր ծրնկներին գալիս

Էն խեղճ հաւերին կուտ էլ չեր տալիս  
 Հօրքս մասին եր գուցէ մտածում  
 Բայց ինձ բուն եր մահիցն է վախում:

## XIII

Այդպէս տարիներ ես վիշտն ապամայ  
 Չոքել է արդէն իմ արտի վրայ.  
 Չի՛ էլ բոյլ տալիս մօտ գնալ խօսել,  
 Ասել աշխարհին եղ ի՞նչ ես լսել  
 Որ մի չանչի տակ քո միտքը դրած  
 Անխօս, անլեզու, գլուխդ առած  
 Գնում ես տանել նրա խաղերը,  
 Ինչպէս տիրոջ մօտ սոված շները  
 Որ սպասում են նրա նշանին  
 Թէ ի՞նչ կը փայլի եւ խաղախ դեմքին:  
 Ախր լեռների սեւ շարքը ագան  
 Որ աչք են բացել նայում մեզ վրայ  
 Իրանց կատարին երկինքը բռնած  
 Արեւի ուժեղ նաճանչը գրկած  
 Անգէտ, անզգայ ցաւին ու հոգսին  
 Բացւած զարուհեւայ շողերի միջին  
 Փեշերը նախուհն մով արել հագել,  
 Մտածում եմ ես է՞ն երբ է մեռել  
 Որ ամեն անգամ գլուխը ցցած  
 Քանի՛ սերունդներ նամփու է դրած.  
 Կամ երբ կը գայ ձմեռը մովի  
 Էն հսկա տեսով ներմակ կը հագնի,

Ես էլ նրա պէս մի ծեր կը լինեմ—  
 էլ ինչո՞ւ իզուր պատան պիտ հագնեմ  
 Գնալ գետնի սակ կրծել քարերը  
 Երեսիս առնել անպէտք հողերը  
 Որ այդպէս երկար մնայ ու հոտի  
 Մինչեւ որ ճիւղուն կը գայ ու կուտի:  
 Ու մտածելով վեր էի գալիս  
 Կարծում էի թէ ետն էլ է լալիս  
 Յիմար ու անգեհ ցաւին ակամայ  
 Մտածում է իւր ծանրութեան վերայ,  
 Թէ ի՞նչպէս է որ աշխարհը անխիղճ  
 Մի բեռ է դառել ու նստել հակիրճ  
 Ոտները ծլօլ իր մեջքի վրայ  
 Եւ չի էլ զգում մի խայր ակամայ.  
 Հապա ծանրավիզ էս մարդուկները  
 Բարձրից կեանք հայցող մուրացիկները  
 Որ երբ կայում էս անմեղ շապիկին  
 Շանթեր է տեղում ձեռաց քս գլխին.  
 Եւ յենում այդպէս իւր ոլժի վրայ  
 Աշխարհը բռնում ափում ակամայ  
 Հմլում ու նղմում ինչպէս որ ուզի  
 Էդ մեզ վերելից տրամ է կասի  
 Որ բնութեան մեջ մարդը քաղաւոր  
 Իսկ նրա առաջ աշխարհը բոլոր  
 Ենթակայ լինի մեկի հանդիման՝  
 Ու այդ ժամարը սողուն է կրկին:

## XIV

Այդ մի սոսկալի միտք էր դառնագին  
 Սակայն շատ էր խոր խոցում իմ հոգին.  
 Տանջում ու կայցում գետնին ակամայ  
 Ինչպէս կորեկը են անուշ օրւայ,  
 Ու հողի միջից այդպէս քաւ լալիս  
 Ասում թէ զուր էս կեանքերը լալիս  
 Էդ մի սոսկալի օրէնք է վաղւան,  
 Որ յետ չէ խլում ինչքան էլ որ լան  
 Այնպէս որ՝ որքան ուզես մտածել  
 Դարձեալ են ծայրին չես կարող հասնել  
 Ամբողջ գաղտնիքն է եղտեղ ծառացած  
 Դու ի՞նչ էս ուզում լոնքերդ կիտած  
 Գնա՛յ ու մեռիւր,  
 Իսպառ մոռացւիւր.  
 Յայնժամ քեզնից ետ մեկը կը ծնի  
 Ու քու բաց քողած տեղը կը բռնի,  
 Չի՛ էլ հարցրնի թէ ինչ մարդ էր նա  
 Որ ուզեց քողնել աշխարհը յիմայ.  
 Հալե՛լ, մոռացւել, ու վերջը՝ յետոյ  
 Որ գարուն կեանքը մեկն էլ չայ հանոյ  
 Եւ նա քու խեղճիդ կոխած տեղերը.  
 Նորից պտտի վարդ աղջիկները  
 Գնա նիրհելու անուշ սարերում,  
 Տեսնի են ի՞նչ է քաղւած մրբուշում  
 Որ այնպէս հպարտ իր միտքն է լալել  
 Էդ խու իմ պաշտած Կովկասն է եղել...

Կրհարցնի՞ արդեօք թէ ինձնից առաջ  
 Ո՞վ է քո մօտիկ հողերը կոխած.  
 Եւ նա չալմապատ նրան ձայն կը տա՞լ  
 Քե՞ նրա հոգում կեանքի հետք չկայ  
 Որ զգայ ինձպէս թէ ապրող հոգում,  
 Միայն մեռածի բոյլ շողփն է մնում  
 Անհետ, անզգայ ցաւին ու հոգսին  
 Կանգնած գարունեւայ շողերի միջին  
 Ապրողն իր հոգում չի՞ էլ իմացել  
 Քե մեռնողն իր հետ ի՞նչ է ունեցել  
 Նա միայն գերի են մեծ աղաթին,  
 Հետեւել է լուռ պապերի ծեսին  
 Բաժակը առել ու բռնել ձեռքում  
 Ասել թէ Աստուծ ողորմի հոգուն.  
 Դրանից աւել էլ ոչի՞նչ իսպառ  
 Անա թէ միտք ո՞ւմ է հաւասար  
 Որ նպասակը դարձրել է շարժում  
 Ինքն էլ տառապում են վերան մընում:

## XV

Շուրջքս անտառ էր բառուս ու յիմար,  
 Միայն երկուսիս օտնաձայնը կար.  
 Եւ յանկարծ ինձ հետ եք խրլելեց  
 Ու մեր առաջից մի սուեր փախեց.  
 Նապաստակ էր թէ կիսար, չըզիտեմ  
 Բայց ինձ քուց թէ պէտքէ սիրտ առնեմ,  
 Վախը կամացուկ մօտեցնում էր ինձ.

Ու յանկարծ վերեւ կեանքը ազմրկեց՝  
 Քամին կամացուկ ծառերին փակեց  
 Եւ ես կանգ առայ են կարող մընում,  
 Վսակի ձայնը սիրտս էր տոնում  
 Նա երգում էր ինձ:  
 «Քովիչ զեփիւռի ձայնին ունկընդիր,  
 Մասաղ արտերի կեանքն եմ տանում ես  
 Ուր ամբողջը կայ.  
 Եւ այդ նոր բացուած միամիտ հոգում՝  
 Իմ մեղամաղձիկ ձայնիկն եմ դրել  
 Որ վիտեն է լալիս.  
 Ու այդ դարաւոր սեգ անտառների  
 Նիրհը տալակած՝  
 Համփայ եմ գնում

Հեռո՞ւ է այգը...»

Օ ինչպե՞ս սիրուն նրա ձայնիկը,  
 Վանում էր այդպէս արտիս քախիծը  
 Գալիս ու գարնուն կրճիս ակամայ,  
 Դիզում արցունքս աչքերիս վրայ  
 Եւ նրա լացից այն կողկողագին  
 Որ տեղերիս աղմուկն է կրկին  
 Հառաչում էին ձիւնոտ սարերը  
 Հալում ու մաշում ապառաժները  
 Ու նրա գլխին մի լուսնեակը ծով  
 Բակ կապած փայլուն ու խած աչքերով  
 Ակընդէտ էր լուռ մի նոր արկածի  
 Որից հոտում է վտակը սարի.  
 Մարգարտանման նրա կաթիլը  
 Մօտեցնում էր հեզ ինչպէս բացիլը—  
 Փայռի կատարին, ու ընկնում ներքեւ

Այդպէս դարերի աշխարհն է մեռել:  
 Ասի մօտեմամ, բայց սիրքս բռնած  
 Մի գաղտնի վախից իրանից գնաց,  
 Ու որոշեցի իր կամքին բողբոջ  
 Բնութեան գործին ոչ էլ ձեռք մեկնել.  
 Նա մեծ էր ինձնից ու հպարտ այնտեղ  
 Իսկ ես սարագիր մի մտեղ այստեղ  
 Որ՝ եհ ո՛վ գիտէ նրա ծով հոգուց  
 Ընկել էմ ներքեւ ու սարւել քամուց  
 Ինչպէս հաւեերի անուշ երամբ  
 Ներքեւ ծփում էր գարու արտերը,  
 Իսկ դեպի վերեւ կորեկը դեղնած  
 Աշունանցանք վաղուց էր հնձած  
 Ու ողջ անտառում էլ ձայն չէր գալիս  
 Բայց ծառի վրէճն մի սիրտ էր լալիս,  
 Հննդուկ էր քե ինչ, չըգիտեմ ես այդ  
 Բայց բուռն էր քե մի բան կայ վրադ  
 Ու ես կամացուկ ուսրս քօրուեցի,  
 Զրի մի փոքրիկ նդփոց լսեցի.  
 Իսկ իմ վերելը քփերի ետեւ  
 Սըլսըլում էին ծառեր ու սերեւ  
 Ամբողջը այդպէս վեհօրէն հպարտ,  
 Կաշկանդել էին իմ միտքը ազատ  
 Եւ ես գլխաբառ մտածում էի,  
 Երբ հեռու ձորում մի ձայն լսեցի.  
 Հըրնդուկը հանդարտ հրքնքաց մեռաւ,  
 Ու վայրկեանից յետ ամեն ինչ լուս  
 Խաւարք հանգիստ եկաւ ու պատեց  
 Եւ սարածքի մեջ ամեն ինչ փնեց...

## XVI

Շուրջըս սարեր էր, քիսպոս ու յիմար՝  
 Միայն առաջիս ցցած ծայրը կար  
 Որ ի՞նչ վիթխարի շրտաքր գցած,  
 Ոչխարի հեռայ արխաջն էր բռնած  
 Իսկ դեպի ներքեւ այնտեղ հեռուում,  
 Աւախն էր պղտոր ավերք փերում  
 Գալիս ու զարնում երիզոս մարզին,  
 Որտեղ խաների բաղերն է եհ հին  
 Ու հոտում առաջ օձապոյտ մեջքով  
 Ինչպէս գնում է գնացքը գծով—  
 Գիշերուայ միջից դեպի կայաւան,  
 Այնպէ՛ս ազդում էր այդ գիծն իմ վերան:  
 Եւ ինձ բուռն էր քե իմ սիրտն եղպէս  
 Երկինքը բողբոջ վառ ասուպի պէս,  
 Գալիս է կեանքի ավերին զարկում  
 Ու յետոյ ցառով աշխարհը բողբում.  
 Որ գնայ մընում մի պահ մոռացւի  
 Այդպէս ուժեղի հանոյքն է յիմի.  
 Իսկ ինձնից յետոյ ո՛վ գիտէ դրսում,  
 Ինչ նոր զուստերով աշխարհն է փոխում  
 Պննում ու հեզնում ցաւին ակամայ,  
 Կանգնում գարունքին սաւերի վերայ  
 Նոր նոր ձեւերով մով հագած պարում,  
 Անուշ իւղերով վարսերը կոկում  
 Կամ քե՛ գեղջուկի կոշտացած ձեռքով  
 Որ երբ փորում է հողը բաքերով



Դուրս կը գան յանկարծ իմ ոսկոռները  
 Իւր բնից գաւաւած իմ մասնիկները  
 Չէ՛ն էլ հարցրնի թէ ինչ մարդ էր սա,  
 Որ ուզեց թաղել սարերի վերայ  
 Որտեղ հովրվի սրինգն է հնչում  
 Կամ օբաներից հորթը բառաչում:  
 Այդպիսի մտեր չեն անի գիտեմ  
 Պատճառ միտք մարդիկ մոռացկոտ կլինեն  
 Չեն ասի մի օր թէ սա էլ էսպէս,  
 Էս նոյն սեւ հողը կոխում էր մեզպէս  
 Ելնում ու գնում գործով դեպի սար  
 Իր խեղճ փլվաքիճն որ ապրուստ հոգար,  
 Նայի թէ սանը սովից չը մեռնեն  
 Իսկ այստեղ ինչպէ՛ս անդարդ կը պառկեն:  
 Դա մի սոսկալի օրէնք է վաղուան  
 Որ չի էլ բողնում իմ կեանքն իմ վերան,  
 Հնձում ու սանում սրտերը էսպէս  
 Չես էլ արտաւում երբ զգալ չգիտես  
 Ու թաղում եղպէս, քեզ պրկում գետին,  
 Նայում ցաւելով քո մեռած դեմքին  
 Եւ յետոյ դարձեալ մի չոր ծիծաղով,  
 Թռչում զբաղում մի օտար կեանքով:

## XVII

Հեռու սարերում բարձրացաւ սեւ ծուխ  
 Ինչպէս մի սիրուն աղաւնու գլուխ  
 Դեմս եկան իսկոյն հին խաչքարերը՝

Յցւած լեռների սուր ժանիքները.  
 Ապա այն հեռում սարածքը բռնւած  
 Արեւելքն էր յղի պինդ շառագունած  
 Չգում պեծերով դեպի սարերը  
 Ուր պրսպրդում են խիճոտ ֆարերը.  
 Աւելի յուսից առաջ են բարձրում,  
 Թփերի սակից կախան է երգում  
 Ու դիմում այնպէս դեպի խորքերը  
 Ուր վերջանում է մարդու նետները  
 Իսկ դեպի ներքեւ են կանաչ ձորում  
 Աղբիւրի ջրից պախրան է խմում.  
 Նայում խրքրեկած լեռների կողին,  
 Թէ ի՞նչպէս ազատ են սառը հովին  
 Ընկել է չափում կանաչ դաշտերը  
 Ուր եւ ապրում են մարդ որսորդները.  
 Արեւի ցոլքից առաջ են մթնում  
 Իւր ցրած հօտին հովիվն է կանչում  
 Իսկ դեպի ներքեւ սասիկ բարկացած,  
 Շներն են խմբով մի լեռով ընկած  
 Պատճառ ու փառում իրար ակամայ,  
 Որ մեծ պատարը ուժեղին մնայ—  
 Ինչպէս որ օդում սեւ ագռաւները,  
 Լուր նախում էին գիւտախնայները  
 Գալիս ու խմբում այն ձորի վրայ  
 Որտեղ ընկած է զոհը գիւտելայ  
 Եւ հովիվն ուշիւմ իր փէքը առաւ  
 Եկաւ գալլերի սարածքը գտաւ:  
 Այդպէս բառաչով մենք միայն մթնում,  
 Մեր ընկածների լեռն ենք որոնում  
 Նայում ու շրջում են դեմքը հապա,

Թաղում հնացած բուսքերի վրայ  
Իսկ դրանից ետ՝ աւելին ոչի՛նչ.  
Այդպէս է հանել մայրը իր արտից  
Սպանւած որդու սիրուն պակերք,  
Որպէս ձիւներում քաղւած ֆաւերը  
Որ երբ բացւում է ամառը նորից  
Արիւն է կարում են ցաւոս վերքից:  
Այդպէս մեր կեանքն էլ իր հունը մտած,  
Գնում է դեպի շիրիմները ցած  
Ուր այնքան մասաղ արտեր են քաղւում  
Քայց չը գիտէի քե ին՞չ են շինում.  
Անարգ պայքարում հակառակ իրար  
Այդքե՞ղ են հաշուում նոր կեանքի համար,  
Թե՞ կասարելութիւնն շիրիմն է լինում  
Որ հողի սակից էլ ձայն չէ լսում...

## XVIII

Ես չը գիտէի. բայց դեպի ներքե՛ւ՝  
Մռայլ մտքերով իջնում էի սեւ  
Ուր խոր ձորի մեջ գիւղն է մտափում  
Եւ որտեղ մեր հին խնկիրն է ծխում.  
Լուսնի լուսի սակ իրիկունները,  
Միտ էլ մխում են են երդիկները  
Ելնում ու շափ շինում ձուխաշու,  
Էդ պառանների աղաքն է անու  
Որ երբ խեղն որդին հանդից կրդառնայ  
Իրիկայ հացին ցամախ չի մնայ

Շուրայի նման կում անի խմի,  
Եդպէս գիւղական աշխարհը կապրի  
Թա՛ք քե իւր շքին սա՛ք ջուր ունենայ  
Ի՛նչ հարկ քե փորը սոված պիտ մնայ.  
Կրակին դրած լիք քաւով մի ջուր,  
Բաւական է որ դառնայ կերակուր  
Մեջն էլ մի երկու հում ձու կը գցեն  
Դրանից աւել ի՞նչ պիտի ուզեն.  
Մանաւանդ կապոյտ են սուփրի վերայ  
Արդեն դիզել է կանաչը վաղւայ,  
Բոխն էլ սոխի հետ բազմել է մեջտեղ  
Ահա եւ գիւղի պանիրը համեղ.  
Ու մօտենում են խմբում միասին,  
Մինչ նրոնքում է հպուռը կտրին  
Այդտեղ եւ մքնին նրազ չեն վառում  
Պատհառ որ նաւրը շա՛ս քանզ է գնում,  
Գիւղացուն ասա են լեռը շրջի  
Ամա նրանից կոպէկ մի ուզի,  
Հին է այդ ցար էն սարի վրայ  
Դու՛ք ի՞նչ եք տեսել, ինչի՞նք եք վկայ.  
Դե եկե՛ք ինձ հետ մտե՛ք գիւղերը,  
Տեսե՛ք ի՞նչ կասեն ձեզ այն դեմքերը  
Խոժոռ, ինքնամկոփ հակասի վերայ,  
Բազմել է արդեն կարիքը հերայ  
Չի՛ էլ քայլ սալիս խօսք բացի խօսի,  
Ու չե՛ք հասկանայ եքե՛, ձեզ ասի  
Էս սիքսս հանիր ու են կողմը դիր  
Թա՛ք քե շիրմերս պարտից ազատիր:  
Այնտեղ եւ ման կայ, սե՛ւ՝ մեծ ցաւի պէս  
Որ երբ մի անգամ խեղն դառը՞ ծեծեց,

Գիսցիր որ շաքրում չորսր պիտ քաղես.  
 Սարսափելի է կեանքը եղ բարձրում  
 Որտեղ հիմնավորց արարն է ծխում  
 Սակայն ինչ անես շա՛ս եմ սիրում ես  
 Որքան էլ ցառով կոկորդս սեղմես.  
 Նախուհուս ու սիրուն սարերի վերայ,  
 Նասել է արդեն գարունը վաղուայ  
 Ձիւնն էլ մեծ պասին սկսել է հալել  
 Էլ ի՛նչ եք ուզում չեք կարում գտնել.  
 Իսկ էիջ յեսոյ էլ են յսակ օդում,  
 Կրտսնեք ինչպէս ծառերն է ծնողում:

## XIX

Ու մեր խեղճ կեանքն են սեւ ամպի պէս,  
 Եկել է նստել մեր կրծքում եսպէս.  
 Ձի՛ էլ բոյլ սալիս շունչ փառել, շնչել  
 Վախելով յանկարծ ձեռքից չըքողնել.  
 Ինչպէս ամպերի խիտ կարաւանը  
 Որ երբ պատում է որպէս սաւանը—  
 Լեռների ծայրը. կարգով, կանոնով  
 Շաղ է դնում միտ առանձին քափով  
 Այդպէս մեր սիրեն էլ արցունքով յղի,  
 Ծնւելուց յեսոյ ուզում է բողբի  
 Անպատեհա՛ն մի բան էս մեծ աշխարհում,  
 Որ փամփնեից բնաւ չէ եղծում.  
 Եւ հենց այդտեղ էլ են մատաղներին  
 Որոնք որ մօտիկ ծանօթ չեն կեանքին

Շա՛ս եմ ավստում երբ որ տեսնում եմ  
 Սարերը ընկած միտ կը որոնեն  
 Քե՛՛ սիեզերքին էս յոյսը սրտոյ  
 Կամ մօր արգանդից մեզ կեանքի կոչոյ  
 Գրոտ արտի պէս մի բան կը լինի  
 Որ մեզ խնայե՛մով պահի ու պաշտի.  
 Եւ դարձեալ նորից յես սայ աշխարհին  
 Ինչպէս ամառուայ չորացած կաղնին  
 Ասի էլ աւել չեմ ուզում պահել  
 Ա՛ն ինչ որ իմ մեջ աւանդ էս բողբի  
 Տառ ու գաղտնապահ ինչքան որ ուզես,  
 Էն վերան մթնում քեկուզ սպանես  
 Էլ չեմ տեսնի որ քն դեմ բողբեմ  
 Ու առաջը ընկած նրանց կեանք հայցեմ:  
 Եւ իջնում էի երբ յանկարծ իմ մեջ  
 Հին սեւ օրերի արցունքը փայլեց.  
 Խլեզր իսկոյն դուրս եկաւ փախաւ,  
 Մօտիկ փառերի արանքը մտաւ  
 Գուրսը հայացքս ոչի՛նչ որ տեսնի,  
 Հետաքրքրութիւնս ուզեց որ ստաի  
 Երբ յանկարծ մի մարդ առաջս ցցեց,  
 Մտիս քելերը մեկէն կրտուեց.  
 Ումեղ կենդանու նա հեծած մեջքին՝  
 Առաջ էր գնում դեպ սարն ահագին  
 Եւ մի սխրայի նա երգ էր երգում  
 Ու քում էր ինձ քե վիտս է՛ պատմում  
 Այդպէ՛ս են մարդիք  
 Որ երբ մնում են մեռակ իրանց հետ,  
 Սկսում են տարել են սեւ ցալի հետ  
 Ոտն ու գլուխը կուշ բերում, խօսում,

Ամեն անցորդի իր դարձը պատմում.  
 Ասում՝ քե կեանքում ինչ որ գայ գնայ  
 Միայն մի բարի անուն կը մնայ  
 Բայց իրանք յանախ դրա հակառակ,  
 Գործեր են բռնում անում քակ մահակ  
 Այսպես էլ եկաւ նա յոխորտալով,  
 Ու ետի կողքին ուժեղ զարկելով՝  
 Անցաւ ու գնաց:

Էլ ոչի՛նչ իսպառ, մենակ էի ես.

Զարու շորտփից

Էբը վեր ընկաւ, սրնփայ ըսկրսեց.

Յորնի հասկերը ջարդւեցին անհետ,

Ու ընկան գետին

Մանուկ էի խեղճ ի՛նչ պիտ անէի,

Սկսեցի կուտ լալ.

Իսկ իմ դեմ ու դեմ ցած բլուրները

Վերեւ հախրում են մշահաւերը

Ու դրանցից զաս՝ էլ աւել ոչինչ:

Եւ դեռ հայհոյեց,

Թէ ինչո՛ւ նրան համփայ չը սէի

Յաղթողը միտ էլ եղպես է դատում

Այդ նոր զգացի:

Եւ երկա՛ր, երկար մի փարի նսած

Գլուխքս երկու ափերիս առած,

Միտ էի անում, յուզուած էի ես.

Մանաւանդ եբք որ եբք սրտաբաց

Օգնող հայացքով նայում եր վրաս—

Զուր էի կտրում. so ինչպե՛ս եղբայր

Նրա հառաչից խղճի խայք չըզգալ.

Փորձեցի օգնել մի փանի անգամ

Եւ միտ էլ արցունքս աչքերիս վրան,  
 Բայց այդ չաշողեց.  
 Նա չարչարւելով շարժեց գլուխը,  
 Ինչպես վանդակում բռնած նընդուկը  
 Ու ինձ էլ հետք իր սակովն արաւ:

XX

Աւելին ոչինչ. այդպե՛ս ընկանք մենք  
 Եբք այդ նոյն օրը այսեղ, ի՛նչ գիտեմ  
 Դուք խաղով ընկած պար էիք գալի  
 Այդպես ուժեղի աշխարհն է յիմի.  
 Արեւն էլ այնտեղ ձեզպես սարդնած  
 Գիշերուայ երկար մրափից նեղւած,  
 Դուրս եր եկել ու նայում եր խղճուկ  
 Ինչպես լացողի կոպերը սամակ  
 Եւ չեք գտնում նա մի բառ մեզ ասի,  
 Թէ ձեր սրտերը ի՞նչպես կը սանի  
 Որ այդպես անվերջ մտքում եք իրար  
 Ձեք էլ կեսանում. եւ ինչո՛ւ համար  
 Վայրի մտքու պես զազան եք դառել  
 Ընկել սար ու ձոր, եղ ի՞նչ եք լսել.  
 Եւ իջնում էինք միտ դեպի ներքեւ  
 Սողալով ընկնույ՛մ համփայի ետեւ,  
 Իսկ մեզնից վերեւ տարածքը մրին  
 Երեւում են եւ կիրճեր ահագին,  
 Գեպի ձախ մեզնից կանաչ քառուսում  
 Որտեղ անտառի բացասն է ընկնում

Երեւում էին փոքրիկ հորքեր,  
 Վերեւ արածում գիւղի գառները  
 Իսկ անդրնդախոր այն մուայլ ձորից  
 Մեռնող մարդու պէս մի ձայն էր գալիս.  
 Վսակն էր այն սեպ ժայռերից ընկնում,  
 Ու հառաչներով անհառը լցնում  
 Նա էլ էր մեռնող մեռակ չէինք մենք  
 Եւ ուզեցինք որ իրար մի նայենք  
 Բայց այն սուկայի եւ վսեմ ժամին  
 Երբ նայում էինք իրար աչքերին,  
 Երկուսս զգացինք որ շատ չենք հեռու  
 Բանականութեամբ իրար օգնելու՝

Վեհ սկզբունքից:

Եւ երկա՛ր այդպէս նայեցինք իրար  
 Մինչեւ վսանգը պարզեց մեզ համար  
 Լի առեղծւածը անցած դարձածի,  
 Ու մենք կիսեցինք հարւածը ցաւի.  
 Նա վերջին հիգով իրան հաւաքեց  
 Եւ սրնֆսրնֆալով մի կոխքի նստեց,  
 Ոտերը զգոյշ են կողմը ընկան  
 Ու կարեկցելով նայեց իմ վերան:

XXI

Շատ էի այդ օր անջանքից այրել,  
 Ու արցունքներով այտերս բացել  
 Նա իւր ցաւի մեջ այդ բանը տեսաւ,  
 Եւ խոր արտի մեջ կարծես քե լացաւ

Անհաւասարութիւնն էս մե՛ծ աշխարհի,  
 Եւ իրաւունքը հալածւած բոլորի...  
 Ու մինչեւ անգամ են մեծ աչքի մեջ,  
 Գոհար ցողի պէս արցունքներ փայլեց.  
 Էն ո՞վ էր ասում որ մարդուց բացի,  
 Որ խեղճ բոլորի իշխողն է յիմի—  
 Ոչ ոք էլ կեանքում զգալ չը գիտէ  
 Որ իր սիրոյ դեմ գնայ, բարո՞ք.  
 Եւ մինչեւ անգամ այդ խեղճ կենդանուն,  
 Ամենից էլ շատ յիմար են կարծում.  
 Բեռում ու քում որքան կամեցան,  
 Տանում նստեցնում փեշերի վերան  
 Ու վերջն էլ խեղճին ոչ մի կեր չալիս  
 Միշտ էլ կրտսնէք չոփեր կրծքիս:  
 Այդպէ՛ս է յիմա. որքան էլ վազե՛ք՝  
 Դարձեալ կու՛տ փորի չըպիտի հասնե՛ք.  
 Յաղթողն իր համար վաղուց է դիզել—  
 Այն, որ բոլորին շատ էիք հասել  
 Տխմար լրքի պէս աչքերը պղծած,  
 Նստել է մեկի ծրնկների դիմաց.  
 Ու չի բոլլ չալիս քեւ առնել քոչել  
 Որտեղ լեռների արծիւն է նստել,  
 Հասնել կարօտով. ու մութ սարերին  
 Փարւել ձիւներում քաղւած լեռներին  
 Գրգռել, յագեցնալ, եւ վերջը, յետոյ  
 Երբ որ հանոյնդ կառնես դու հանոյ,  
 Էն մեծ բարձունքից նետել դեպի ցած  
 Որտեղ մեր յիմար աշխարհն է ընկած  
 Գնալ քաղւելու ու մահրդ ծոցում,  
 Մի՞քե արեւը այդպէս չէ մեռնում...

Բայց ես այդ բանը միտս զգում եի  
 Որ նա իմ հոգու ընկերն է յիմի,  
 Ազատ ու անկախ են մեծ տարածում  
 Մենք երկուսով էլ լաւ եինք ապրում.  
 Ծեծ, տէր եւ ծառայ դեն եինք դրել  
 Իմանալով որ ընկեր ենք ձեռնել  
 Երկուսս էլ գերի են չարաւոց նամիսն,  
 Տեղափոխում ենք բեռներ ահագին  
 Էլ էդ պատճառով ինչո՞ւ մեծ լինել  
 Կամ ես նրանից ինչո՞ւ եմ աւել  
 Որ նրա մեջքին ոտերբս մեկնեմ,  
 Եւ խեղճ ու յոգնած կենդանուն բզեւ.  
 Այդպէս ապրելու շատերն են սովոր  
 Բայց ես հենց մանկուց ասել եմ ինչ որ:

## XXII

Կրօնացայ նայել են սեւ աչքերին  
 Իսկոյն հայացքը զցեց նա գետին,  
 Ամաչեց՝ քէ ինչ, չըզիտեմ ես այդ  
 Բայց կը կարծէիր բարկացաւ վրայ  
 Քախածս եր դեմնով, ու նրա հոգում՝  
 Սուզւեցայ տեսայ նա էլ եր խորհում  
 Մարդկային մտեր, իմիսիս պէս պարզ  
 Ինչպէս գիշերուայ սուկայի երազ.  
 Նա է՛լ եր տանջւած ու երկար բկում  
 Հետքից չարացած բուրբ չէր գնում  
 Ու մանկութիւնը իմ ձեռնում բռնած՝

Կեխտի, քրտինքի աշխարհը մտած  
 Մարդկանց սպանել ես որոշեցի  
 Որ բնութիւնը առանց որդ ապրի...  
 Այդպէս եր այն օր, այդպէս եւ այժմ  
 Քեկուզ մահուանից ես շատ եմ վախում.  
 Ապա մի տեսք այդ նիհունները,  
 Ի՞նչպէս են կոխում խեղճ ծաղիկները  
 Պրկում ու մեխում գետնին ակամայ,  
 Ծծում հաճոյքը խոռվայոյց օրուայ.  
 Եւ յետոյ այդպէս խմբում միասին  
 Գնում փառելու են խոնաւ փոսին.  
 Որտեղ դարերի աշխարհն է պառկել  
 Եւ ուր մահից յետ մի ձայն չէ լսել.  
 Ինչպէս արտերում խիտ մտեխները  
 Այդպէս մեռնում են եւ սողունները  
 Գնում քացելով նամական դեպի սար  
 Որտեղ ամպերի կոյտերն է մուայ,  
 Մռնում ու տանում ես կեանքը հապայ  
 Քողնում ամբողջ աշխարհի վրայ  
 Ու ինքը նորից կեր գնում ցաւին  
 Այդպէս ուժեղի օրէնքն է այն հին  
 Որ դժերի մօտ մեկը միտս լինի,  
 Ընկած դրութեամբ եւ քիմքը շարժի  
 Ու նա ինքն իր մեջ մի հաճոյք զգայ  
 Քէ մեռնողն անդարձ ի՞նչպէս կը սքզայ  
 Մանուկ օրերը իւր անցած կեանքի,  
 Էդ խու գայլերի ուզածն է յիմի:  
 Կը տեսնի՞ արդեօք քէ այդ սեւ մքնում  
 Մեռնողն իր համար ինչեր է զգում  
 Եւ նա մեղմաբար նրան ձեռք կը տա՞յ

Թե՞ նրա սիրքը խղճի խայր չի զգայ  
 Որ առնի իւր հետ փարւի եւ խաչին,  
 Ասի քե մեկ եմ գոհւած աղաքին  
 Երկուսս էլ ուժով ես կեանք մսած  
 Երկուսս էլ բոյե գնդակ եմ եղած—  
 Մի երբորդ ձեռնում, ու բռնում վեր-վեր  
 Մի՞քե ես կեանքում միտ էլ չի եղել  
 Որ առնի մեր սիրքն գործով զբաղի  
 Բայց հենց այդ գործը մի խա՞ղ չէ յիմի:

## XXIII

Քիչ քիչ արեւը բարձրացաւ դեպ վեր  
 Որտեղ մեր արք իր ծայրն է գցել,  
 Կանգնեց ու դիտեց շողովը յետին  
 Անուշ խոտիկն աչքերս միտին  
 Ու այն ձորի մեջ երկար ծայր տուաւ  
 Բարձր սարերի ետեւը անցաւ.  
 Խօսուն առուններն արձաք դողանջով  
 Ինչ կորել էին գիշերը մքրով  
 Եկան հսկելով աչքիս անց կացան  
 Այդպէս նայում են ամենին իմ վերան.  
 Իսկ շուխս քարափի արխաջից հեռուում  
 Գայլերի նման շներն են հաշում  
 Դունչերը ծռել նայում են բարձրից  
 Թարմացել են լաւ գիշերուայ քնից,  
 Ինչպէս իմ մօտիկ ձորի բերանը  
 Հրեն բացւում է մահի սառանը

Ամենքը գալիս անցնում են եհեղ,  
 Բայց քե ոչ մեկը չի կորցնում մի ծեղ  
 Իզիք են դառել ձի նստել խաղում  
 Էնպէ՞ս են թում են հարք աւազում,  
 Որ ես նրանց տեղ վախից դող ելայ  
 Ու սրտով սխուր մի քարի նստայ:  
 Գարձեալ նոյն էին ամենքը ինձ հետ  
 Շուրջս գոյնը գոյն ծաղիկ հոսանետ  
 Որ փուռում էին մեղմ հովի առաջ,  
 Կարծում էիր քե եղեմն է ծաղկած.  
 Այնքա՞ն սիրուն եր, այնքան գովելի  
 Այդ վե՞ն վայրկեանը եւ արցունքով լի,  
 Որ կարծում էիր քե այդ սուրբ ծեղին՝  
 Մահը փարւելու կը գայ մեր երկրին...  
 Ու դիտում էի աչքերս յառած  
 Բնութեան գողտրիկ պարք արբեցած,  
 Նայում ու զննում սարածքը բոլոր  
 Կարծելով քե այն սրտումն է ինչ որ  
 Նստած սգաստով մի լարի վրայ  
 Ինչպէս ծաղկոցում սառակը դժնեայ  
 Ուզում է սրիս փախցրնի սանի  
 Որտեղ որ խեղճի արցունքն է յիմի.  
 Ու միտս եկաւ իսկոյն եղ ժամին  
 Թե՞ մեր խեղճ կեանքը սառապող ցաւին  
 Ո՞րքան է տեսնենք ռապ հարկաւոր  
 Որ սպառնում է կրել մինչեւ որ—  
 Մի մութ անհայտից նորը կը ծլի,  
 Ու նա նրա հետ ժամանակ կանցնի:  
 Այդպէս եմ քաղել արցունքը մեր մեջ  
 Ու հենց այդ յուսով սարել մինչեւ վերջ

Թե ցաւերի հետ ես կարող օղում,  
Մեռնողն ապրում է մի հոգու խորում  
Եւ կանում նրան, սանջուում ակամայ  
Որպէս զեփիւռը են անուշ օրւայ  
Որ մի ծեր քամի գայ ու պինդ խրլի,  
Ինչպէս պոկում է շուշանը սարի  
Երբ նա իւր համար լաւ տեղ չէ բնտրել  
Յից քարափնեռում արմատն է գցել:

## XXIV

Ներքեւ ինձանից հեղեղասն էր խուլ  
Որտեղ գետակը հոսում էր իսուր  
Գալիս ու զարնում ափին ակամայ,  
Գնում փռւելով աւազի վրայ  
Որտեղ առաջին ալիքն է ընկել  
Եւ ուր ամբողջը այդպէս է մեռել  
Աւելին ոչինչ: Այդ մեծ սարածում  
Մեռնող հոգու պէս մի ձայնն է մնում  
Էն էլ որ բողբոջն լիք արտով հնչի  
Ազատ մարդու պէս մի բան կը լինի  
Թե չէ՝ գալ կեանքում ու ինքդ փռուման,  
Ընկնել մի խորում էն նաննի նրման  
Վախից արտանախ ժած չը գալ տեղից  
Թե ինչ է յանկարծ չը գրկես կեանքից:  
Այդպէս ասելով շատերն են վստահ  
Որ անկիւններից վստահ չի մօտ գայ  
Բայց եղ խեղները չեն էլ մտածում

Որ աշխարհի մեջ աղմուկն է մնում.  
Գանդի՛ր, տորիւր ու ինքրդ էլ նետ,  
Գնայ քաղելու եղ կուռում անհետ  
Ուր իրար զրկած հներն են ընկել  
Եւ որոնց տակից նորերն են ծրլել...  
Իսկ մի փոքր ցած մահակը ուսին,  
Մի սուր անցաւ եզր առաջին.  
Գիւլագի էր խեղն, օբից էր գալիս  
Եւ մըմնջալով իր օրն էր լալիս  
Թանկ քակը կախ արած փայտից  
Սրայակ ներկելով իջնում էր սարից  
Դեպի մեր գիւղը. ուր ցած մըռուռում,  
Լայն երդիկներից արարն է ծխում  
Ապա այն շողքը գիծ մոզու նման  
Ի՛նչպէս էր վստահ վազում մեր վրան.  
Անցնում ու կտրում սարեր ակամայ  
Գալիս ու կանգնում իմ գլխի վերայ  
Ինչպէս մահագոյժ սեւ հրեշտակը,  
Եկել էր խլի իմ հօր վաստակը  
Ասի թե բաւ է ինչքան ման եկար  
Այս անգամ էլ խենթ պիտի լիտ գնալ  
Դեպի խորերը մեծ սիեզերքի  
Ուր չնաշխարհիկ գաղտնիքն է յիմի:  
Նստած ծանրախոսն էն մեծ սարերում  
Մտածում էի. ե՞ս ինչ է ուզում  
Որ եսպէս անվախս առաջս կտրել,  
Անամօթի պէս իմ սիրն է մեծ  
Եւ ուզում նաննիս զրկի ու տանի  
Որտեղ բոլլերի աշխարհն է յիմի  
Ու նրաքի վրաս լեզու բրբրբի



Էդ խօ արջի պէս մի բա՛ն կը լինի:

## XXV

Բայց յանկարծ դեմս մեծ մեռում ահա  
Գայլերը սըւին ոչխարի վըրայ.  
Պաստեցին այդպէս կուռ շղթան մեկ-մեկ  
Կորան քաղւելով ձորերում անհետ:  
Ու մի վայրկեան էս ոչխարը ցրած  
Խմբւել էր մի տեղ խրճնած ու լուծած  
Հովիվն էլ յուզուած դուրս եկել ֆաբին,  
Կանչում էր վախից ցուած իր հօտին:  
Ներքեւ շները հաջեցին մի պահ,  
Ու էս վագելով եկին դեպի նա  
Չորի բերանը սիւր չարին մտնել  
Այդպէս բողոնում են խլածը սանել  
Ու դրանից էս երկու ժամ էսպէս  
Լսում էր հովիվի արինգը պէս-պէս  
Չուխեն աջ բեւին լայիս էր կանչում  
Ու ամեն անգամ են ցուն են պատմում  
Թմ ի՛նչպէս նրանց արտերը սարաւ  
Եւ են բերանը ի՛նչպէս չը կողպաւ.  
Որ եկան խմբով փարախը մտան  
Ու են խեղներից երկուսը սարան:  
Իսկ քիչ յետոյ էլ արծիւը ահա,  
Փաք սըւաւ նստաւ սարերի վերայ  
Մի մեծ պատառ էլ իր նանկը գցաւ,  
Էդ խօ գողերի քալանը եղաւ:

Վերեւ երկընճում ամպերը մթին  
Ինչպէս ուղտերի շարքեր ահագին  
Եկան ու անցան գլխիս վըրայով  
Մի վայրկեան ձորը ծագկէց այդ ֆողով  
Ու չիմաններում այդ շողքը այնպէս  
Այնպէ՛ս էր սիրուն որ դիտմամբ կարծես,  
Երկնից վեր եկող անմեռ ցող լինէր  
Որ սիւրբս այնպէս ուզեց քրոջընել.  
Իսկ դաւնից էս այն աչքը վերին,  
Ժպտուն կարոտով նայում էր ողջին  
Թե ո՛րտեղ հիւանդ մի սիւր է ընկել  
Էդ նրա համար մի միտք է եղել  
Գնալ ու լոյս տալ այդ խեղճին ցեխում,  
Ասի քե ի՞նչ էս ընկել էդ ցածրում  
Վեր կաց ու դիմիր դեպի աստերը  
Որտեղ կորչում են մարդու հետքերը  
Կանգնիր ու դիտիր ինքնդ ֆեզ բարձրում,  
Թե չէ ցեխերում էդ ի՞նչ էս շինում...

## XXVI

Վերեւ անտառում արածում էին  
Յրւած շարքերով եզներ ահագին  
Դանդաղ ֆայլերով գնում դեպի ձոր  
Որտեղ ջրվեժի աղմուկն է ինչ որ  
Անհուն կարոտով դեմ առնում սարին  
Եւ յետոյ նստում են անուշ ֆաբին  
Կրծում եւ ուտում քփերը բոլոր

Էդ մի ընդունած օրեւեմ է ինչ որ  
Բայց ահա այնտեղ անսառք զընգաց,  
Ու մի ձայն թնդաց.

Քփերը մասալ մօտ եկան իրար,  
Գրկւելու համար.  
Ամբողջը այդպէս վեճօրէն շարժւեց,  
Ու մէկը երգեց:

Հովվունիքն էր այն. հին կուժը ուսին,  
Իջնում էր դեպի աղբիւրը մրին  
Նրա առաջից այժեամբ փախաւ,  
Քփերում պահուաւ.

Եւ նա վախեցած կանգ առաւ հպարտ,  
Ու նայեց ազատ:  
Երկինքն էր հնտեղ իր շողը գլխին,  
Արեւը ուժեղ նանանչով յետին  
Սէ ես նայեցի նրա աչքերում  
Լուսի ու մութի ցնորքն էր փայլում:  
Սեւ սաթի նման մազերը ցրել  
Ձեռները պարզած ուզում էր ընկնել  
Ինչպէս հրեւեսակ մի շողփի վերայ  
Երբ նոյն բասւերում հովըվին տեսայ

## XXVII

Պատկերը փոխաւ, ամեն ինչ լուեց  
Ու իմ առաջին հին ժայռը ցցուեց  
Սերը բերկրանեով եկաւ ու անցաւ,  
Եւ իւր յետեւից ոչինչ չը բողաւ:

Ջրի նրդփոցը են մութ ձորերում  
Քմրոյ արտերին օրօր են ասում  
Եւ որովհետեւ շատ յոգնած էի,  
Ուստի այդ ձայնից ես էլ ֆնեցի:  
Ու էլ չիմացայ թէ են կածանում  
Ինչ եկաւ անցաւ, ինչէր են լինում  
Անօրոճն այդպէս գեղեցիկ կը լինի,  
Երբ հերոսը ի՛նքը կը փորձի  
Էք նոյն վայրկեանը իր հոգու վրայ  
Ուտեղ սիրելու հանոյքն է յիմա,  
Իսկ էդ նոյն պահին մի բռնուն միայն  
Ծառի նդներից նըթնըրաց մեռաւ  
Աչքերը չուած թոյլ ընկաւ գետին  
Որպէս թէ հնպէս մեռած լինէր հին  
Էլ ոչ ձայն, ոչ խօսք. եւ վերէն օդում  
Դեփփից անխըռով արեւն է փայլում.  
Լոյսի խուրձերը աչքերի վերան  
Ասես թէ ջոկած յակինք լինէր այն  
Նայում էր անվերջ ու չէր կտրանում  
Ապուտ մարդիքը այդպէս են լինում  
Իրանց անգիտակ դիրքում գեղեցիկ  
Ձե՛ն էլ խմանում թէ ինչ մի փոքրիկ  
Ցաւ է մեզ ցանջում ու պրկում գետին  
Ինչպէս երաւեսից չորացած գարին  
Որ երբ ամառը չես ջրում նրան  
Ըսկսում է մեռնել ցողունի վրան  
Դեղնած ոստերը կուչ բերում, պահում,  
Էդպէս էլ մե՛նք ենք մեր բնից բափում:

## XXVIII

Միսֆս ցաւի հետ ելաւ ու գնաց  
 Էտն էլ բեռան սակ անսառում մնաց,  
 Ասի քէ գնամ հօրքս մի կանչեմ  
 Ամա եղ դեփքը ես ի՞նչպէս յայտնեմ  
 Կուչ էի եկել վախից չորացել  
 Այնպէս էի ես ինձնից գնացել,  
 Որ կարծում էի քէ նա իր որդուն  
 Չի՛ էլ քողնելու մտնել իրա տուն:  
 Այդպէս էր նա միտս բարկանում գալիս  
 Ու մեր ցած շեմքին ոտերը տալիս  
 Թէ եղ լակոտին տնից դուրս արա  
 Որ էլ իրիկուն դասարկ տուն չի գայ  
 Թէ ինչ է՝ այգուց հե՞ր խոտ չի բերել  
 Կամ ետր կապած ինչո՞ւ է քողել,  
 Գիւղացու տղան պա եղպէ՞ս կըլինի  
 Դասերից յետոյ ինչո՞ւ պիտ չօգնի—  
 Ինձ, որ ցաւի սակ կուել եմ ետքան,  
 Ի՞նչ ես նահ արել ու բնկել վրան.  
 Մօրս էր բարկացած եղ խօսքը ուղղում  
 Նա էլ նեղացած վրաս էր նայում:  
 Ու մքսմքսալով իջնում էի ցած  
 Կարծես ինձ համար աշխարհն էր մքնած  
 Այնպէ՛ս էի ես դալկացել, մեռել  
 Որ խեղճ ոտերս չէր ուզում շարժել.  
 Առվաձուռքիւնից ուժըս կորցրած  
 Թուլութիւնն էլ խօ մարմինս էր մտած

## XXIX

Նիհար ոսկրոտիս շիգրից դողողում,  
 Այդտեղ էի ես օրերս կրծում  
 Թէ ինչո՞ւ այնպէս ուժեղ չեմ ես էլ  
 Որ նրա ոտից բռնեմ շրպոտել  
 Մի յետին քափով դեպի ձորերը  
 Որտեղ հոտում են անքաղ լեւերը  
 Կամ քէ մի ձեռով դունչը տրտեմ  
 Ծունկըս յաղբողի կոկորդին դնեմ,  
 Որ զգայ նա էլ որ մեր մերկ կրծում  
 Յաւից խելագար մի սիւրս է քնում  
 Վշտից տապալած տալ արել, լուել,  
 Էղ դեռ չի՞ ասում քէ մարդ չենք մենք էլ.. .

Այդպէս էի ես մտածում լալիս,  
 Ու ցաւից նեղւած արցունքս էր գալիս  
 Յաղբողի արցունք, գետի չափ մեծ, սեւ.  
 Որպէս հալածւած աւանն մի տերեւ  
 Թոյլ դողում էի պինդ քամու առաջ  
 Ինչպէս քաղիքը ձեռւած ու քշւած—  
 Անձրեւի ջրից, հովրվի ուսին  
 Այնպէս լալիս էր իմ կեանքն այդ օրին:  
 Հասայ վերջապէս առանց նայելու  
 Թէ ինձանից ետ ի՞նչ է լինելու  
 Տեսայ խեղճ մօրքս նստած մեր դռան  
 Նոր չուլ է գործում քաղիքը ծնկան—  
 Մեր ետի համար, որ մեջքը ծացկեց

Ու յեսոյ այդպէս մեր խուճար բերենք:  
 Հայրս դեռ չկար. ու ես պատմեցի,  
 Եւ սարսափելի մի ձայն լրսեցի  
 Աշխատող ձեռքն եւ մեր սնից պակսել  
 Ո՞նց սուս անեինք, ինչպէ՞ս չարսաւել  
 Երբ մի այծի գին այդ վերան գիւղում,  
 Մեզ անտանելի պարտեր է ծրնում:  
 Եւ ամբողջ մեր տունն իր սերը հագաւ,  
 Ու անպատմելի այդ ցար լացաւ  
 Դժբախտութիւնը մեր վա՛ս օրերի  
 Ու ներհակութիւնն անիծւած բաղդի  
 Որ երկար ու ծոյլ ոտերը մեկնել  
 Միտ էլ խեղճերի վզին է նստել.  
 Ու ծաղրում նրանց բուրբութիւնն անհաս  
 Էդպէս նայում եր յաղթողն իմ վրաս  
 Որ բեռան սակից մեջքը ծառանայ,  
 Մի օր էլ հանգիստ իր խղճին դառնայ  
 Ասի քէ ի՞նչ եմ անբան եւ դառել  
 Ուրիշի ցար գլխով շարակել  
 Ու սանում այդպէս դեպի կալերը,  
 Որտեղ ապրում են անցաւ խոզերը  
 Նստում ու հանգիստ ուտում ակամայ  
 Էդ խօ ծոյլերի աշխարհն է յիմա:

XXX

Գնացինք հանդարտ քէ տուն բերելու  
 Տեսանք որ տեղից չի՛ էլ արժուելու

Մեղան եր արել ու պառկել գետին  
 Ինչպէս շանբահար են հսկա կաղնիքն.  
 Ոտերը մեկնած տում արել, մեռել  
 Նա իւր կեանքի մեջ չէր էլ աղօթել  
 Մի աչքը միայն կետով չափ բացւած  
 Միւսը ամբողջ աւազ էր լցւած  
 Ու մրջիւնները դուրս էին քափւել  
 Մեծ ակառները իրար էր սղմել  
 Այնպէս որ, կասես ջիգրից տրափում  
 Էն հսկա ցարից խօսել էր ուզում.  
 Մեջքի մի կողմը քարը ջարդոսել  
 Փորի սակից էլ մի ձող էր մտել  
 Եւ ամբողջն այդպէս շանբահար մեկնւած  
 Չես էլ ափսոսում լալիս ես կամաց,  
 Կեանքի հեզմանքը եղ մութ ձորերում,  
 Այդպէս մի ցաւ էլ իմ սիրեն էր գցում  
 Մանաւանդ հայրս, երբ բեռը քափեց  
 Ու խեղճի կաշին փերթել ըսկրսեց:  
 Այդպէս է այնտեղ. տեսի չունեինք  
 Ու մեզնից ստոր մի բոյլի մորթով  
 Մեր մերկութիւնը պիտի ծացկեինք.  
 Շիրիմը նրա չը ծացկեց խոսով  
 Ինչպէս ծացկում ենք մեր կեխսը ցառով  
 Մեղմ հովը միայն ծառերի գլխից  
 Նրա մերկ մարմնին համբոյր էր ցալիս  
 Դալիս փութով անցնում ակամայ  
 Նստում են կանաչ սարերի վրայ  
 Ու յեսոյ դարձեալ ժայռերի միջին  
 Կորչում քաղելով իւր յետքը վերջին:  
 Այդպէս մինչ օրս էլ մեր փունը կտրել

Գանգի լայն ոսկրը նեան եմք դրել  
ձամփայի վրայ ու խաղում կամաց  
Որտեղ մեր հեր փախել է խրսնած  
Ազին դեպի վեր մեկ կալերը,  
Ու մի լաւ խժռել գարու հասկերը  
Որի սան ծերին պառուր նստել  
Թոյլ աչքը հանդարտ կարին է գցել

## XXXI

Նրանից յետոյ էլ իլխին գալուց  
Մեր հեր հնետղ չէր երգում վաղուց  
Գլուխը մոխրոտ վազ տալիս, խաղում,  
Էլ են խմբի մեջ նա չէր երեւում.  
Ոտերը մեկնած սեւ հագել, մտռել,  
Նա սարի գլխին վաղուց էր պառկել  
Ու մինչեւ անգամ նինուն վաղեմի,  
Նրա սեւ յեփց չէր փառում յիմի  
Անձրեւից ձեռնած փառ դառել, պնդել  
Արեւը վաղուց իր գործն էր տեսել  
Եւ երեխի պէս այժմ էմ հասկանում  
Թէ մայրս այնժամ ինչո՞ւ էր լացում  
Երբ երեկոներն ամեն մեկի սան,  
Կուտ չորտոտանին կանգնում էր դռան  
Շում էր յանկարձ հարցնում իրձանից  
—Պա մե՞րը ուր ա, ինչո՞ւ չի գալիս  
Ու տունն էլ եթէ մի այժ չունենայ  
Էլ էդ խեղճ տունը ինչի՞ պէտք կը գայ

Շատ սան բակերում հաւ էլ չի լինում  
Իսկ էդ սան տիրոջ տաս խոր է խոցում...

## XXXII

Ասի ցանկութեան այս ձերք անհաս,  
Որ մանուկ մտքիս ընկերն է անմաս,  
Առնեմ, դէն դնեմ, ու վրէն նստեմ  
Եւ միայն ներկայ գալիքից խօսեմ.  
Որ էլ չը յուզի նա իմ մանկական  
Վե՛ն երազները յիշատակութեան  
Գեղեցկութիւնը հեռո՞ւ դաշտերի  
Եւ չարփառութիւնն անիրաւ կեանքի  
Ուր ոտաբոբիկ սոված խմբովին  
Լողանում էինք ջրվեժի սակին  
Եւ գրկում իրար սրկընում ներքեւ,  
Ժայռերին կպած հապուկ ու թթեւ  
Որ երբ մեր գլխից ջուրը ցատկոտ  
Կը կարծէիր թէ մի մասն ենք եղել—  
Պէն մեծ փառափի. որ ցցած վերեւ  
Պինդ արմատները բողբ է ներքեւ:  
Հապա են փոքրիկ մութ նեղումները  
Որտեղ ապրում են ծիծեռնակները  
Խմբում միասին ծրվալով բոչում,  
Որտեղ բարձունքից ջրվեժն է օտչում  
Ու խփում կցով կն մառած փայլին  
Թեւով կամացուկ փնում ջրերին  
Իսկ մեմ էլ ցածրից բերաններս բաց

Նայում եմք ուրախ չոր հացը բռնած  
 Մինչեւ որ ձորից էլ ձայն չի գալիս  
 Չաղացի ջուրը փանդել եմք սալիս  
 Այդպէ՛ս եր այնժամ. իսկ յիմա նսած՝  
 Մահւան անողորմ սեւ ցառով բռնած  
 Անհուն կարոտով մեր օրն եմք լալիս  
 Որ անա հեռւում սեւին է սալիս  
 Եւ եղ բանն իսկի ինձ խորք չէր բըւի  
 Եթէ մեռնողի արցունքը չը լինի:

Այդպէս էլ անա մեր կեանքը գնում,  
 Էն մեծ անհունի անհառ սահմանում  
 Հալում նրա մեջ, ձուլում նրա հետ  
 Ինչպէս անլեզու մեր եզր սրգետ  
 Քաւում հողերին իր հետքը կորցնում  
 Մի՞թէ կեանքի մեջ այդ միտքն է լինում:  
 Որ նրանից ետ մեկը գայ սեսնի  
 Սեւ յուճերից գաս ոչինչ չը գտնի  
 Կանգնի արցունքոտ նախորդի վերայ  
 Որտեղ եռութեան ոչինչն է յիմայ  
 Ու ինքն էլ իրան այդ շարժում դասի  
 Այդ արդէն խենթի քրքիջն է ցաւի  
 Որ բնութիւնը այդչափ ցածրանում  
 Յանախ արտերի դահիճն է դառնում:  
 Ու այդ դուրսեամբ մարդ էլ չը գիտէ  
 Թէ վաղը իրան նոր ինչ կը բերէ.  
 Կեանքի այդ բոլոր գաղտնիքը նրման,

Իր մեջ է առել գրոյցը միայն  
 Եւ ի սխռութիւն այդ հեքիաբներում  
 Խեղճ հոգիների արցունքն է պատմում:  
 Վախից ստիպւած մեկնել են պէս-պէս,  
 Երազներ ճիւղել տառապել մեզ պէս  
 Ու վերջն էլ փոշին բողբոջ աշխարհում  
 Այդպէս է մարել յոյսերը կեանքում.  
 Ասի թէ գնամ ոտքս մի ծալեմ  
 Գետինը փանդեմ ու մեջք պառկեմ  
 Որ իմ մահը գայ ինձ քնած սեսնայ  
 Երբ ամեն մի կեանք էլ ճամփով կերթայ.  
 Այդպէս եր ասում պապրս վաղեմի  
 Թէ ես սասանան եթէ չը լինի  
 Յիմա շատ վաղուց մարդիք բեզարած,  
 Համափա կրնկնէին աշխարհը բողած  
 Եւ եր միտքն իսկի խորք էլ չի բլում  
 Երբ մահի վրայ շատ փիք ես անում...

Ու գարնան գեղով մեր կտրի ծերին,  
 Տեսնում եմ նսած ազուար ֆարին  
 Մենք էլ գովի մօտ կանգնել եմք շրվար  
 Դասարկ է այժմ այդ խուցը յիմար.  
 Ու նրա կտրից անձրեւը կարում  
 Հաւերն էլ վրէն փռուջ են անում  
 Իսկ մողեսները փայտի արանից  
 Հազիւ շոկում են յոյսը խաւարից  
 Նրա անկիւնի մի ֆարք պրծել,  
 Դուռն էլ դեպի մեզ երեսն է ծռել  
 Եւ բնակիչներն ճիւղաւորց այդ սան,  
 Վաղուց բողբոջ են այս կեանքը դաժան

Իսկ երբ վախուկ ականջը ցցել  
 Եզան նակասից չէ ուզում լիզել  
 Նա էլ որոնով չի շոյում նորան  
 Այդպէս վերացան բնակիչն այդ սան:  
 Երբ երեկոյեան քնի ժամանակ  
 Մօտենում էինք կեր տալու, կամ ակ,  
 Նա արտի խորքից չէր կանչում այնտեղ  
 Կամ եզան վրայ չէր նայում ուժեղ.  
 Եւ միայն կտրի չարդախի վերայ  
 Հաւերի կեխսոս հին քառն է յիմայ  
 Որտեղ ափաղաղն իր քունը առնում  
 Առաջին անգամ եւ երգն է ասում  
 Աւելին ոչինչ. այդպէ՛ս է այնտեղ  
 Եւ գոմի փլած կտուրի վերայ՝  
 Փռուած է մահուան սաւանը զգեղ:



ՀՀ Ազգային գրադարան




NL0368146



## ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1.	„Նրկու պատկեր“	---	---	---	10 կոպ.
2.	„Բանաստեղծութիւններ I սրակ	---	---	---	8 »
3.	»	II	»	---	10 »
4.	„Սննասականութիւն“	---	---	---	10 »
5.	„Պատկերներ“	---	---	---	30 »
6.	„Բացուող ծաղիկներ“	---	---	---	50 »
7.	„Կեանքի զարունիւն“	---	---	---	25 »



Վանառում և գրականների մօտ.

Պահեստ Բագու Տրուգ սպարանում.